ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԲԱՅԱՆ

Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտություններ թեկնածու, պրոֆեսոր

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՄԱՆ

Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական Պետական Ինստիտուտի հայցորդ

ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ՈՐՈՀՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հոդվածը կազմված է երկու մասից՝ տեսական և հետազոտական վերլուծություններից: Տեսական մասում տեղ են գտել հայ և արտասահմանցի առաջավոր գիտնականների՝ որոշման ընդունման վերաբերյալ կատարած տեսական և հետազոտական վերլուծությունները: Օրինակներ են բերվել էքստրեմալ աշխատանքային պայմաններում որոշումների կայացման վերաբերյալ ժամանակակից հոգեբանության առաջավոր գիտնականների տեսական դրույթներից: Հետազոտական վերլուծության հատվածում ներկայացվել է 2014 թվականի աշխարհի առաջնության հանդիպումները վարած ֆուտբոլի մրցավարների և Հայաստանի բարձրագույն, առաջին խմբերի, ինչպես նաև պատանեկան առաջնությունները սպասարկող ֆուտբոլի մրցավարների՝ հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական պատրաստականության մակարդակի տեսանկյունից թույլ տված սխալների մեր կողմից կատարած համեմատական վերլուծությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ.

Որոշման ընդունում, հուսալիություն, ֆուտբոլի մրցավար, մրցավարական սխալներ, հոգեբանական գործոններ.

Ժամանակակից ֆուտբոլի կարևորագույն բաղադրատարրերից են խաղի տեմպը, ֆուտբոլիստների արագությունը, արագաուժային հնարքները, աշխատանքային ծավալը, տակտիկական գործողությունների (անհատական, խմբակային) քանակը, որոնք ուղեկցվում են ֆիզիկական և հոգեբանական լարված մրցակցային պայմաններում:

Քանի որ ֆուտբոլի մրցավարը հանդիսանում է ֆուտբոլային հանդիպման անբաժանելի մասը, ուստի նշվածները ուղղակի կամ անուղղակի ձևով կապ ունեն նրա գործունեության հետ: Որքան բարձր է մրցման մակարդակը, այնքան բարդանում է մրցավարությունը՝ թե՛ հոգեբանական, և թե՛ ֆիզիկական պատրաստականության առումով: Ֆուտբոլի (նաև հոկեյի) մրցավարները մեկ խաղի ընթացքում հաղթահարում են շուրջ 15 կմ տարածություն, կորցնում են շատ էներգիա ու նկատելիորեն հոգնում են [***Ղազարյան Ֆ. Գ.***, էջ 61]:

Ֆուտբոլի մրցավարությունը հատուկ նշանակություն է ստանում այն առումով, որ դրա հիմքում ընկած է տարբեր խաղային իրադրություններում, խաղադաշտի տարբեր հատվածներում մրցավարի կողմից իրավիճակի սուբյեկտիվ գնահատումը, և ոչ միշտ է այն ճշգրիտ ու հստակ: Սխալները հիմնականում պայմանավորված են լինում ֆիզիկական բեռնվածության պայմաններում հոգեբանական կայունության անկմամբ: Նշվածը հատկապես նկատելի է բարդ ընթացքով հանդիպումներում և ավելի ակնհայտ է դառնում խաղավերջում, երբ ոչ միայն այն պատճառով, որ ֆիզիկական բեռնվածության ֆոնի վրա հոգեբանորեն լարվում են մրցավարները, այլև երկու թիմերի ֆուտբոլիստների, մարզիչների ու երկրպագուների կողմից շիկացած մթնոլորտ է ձևավորվում

մարզադաշտում: Ակնհայտ է, որ այս գործոնների համալիրը իր ազդեցությունն է ունենում մրցավարական որոշումների կայացման ֆրա: Հոգեբանական հետազոտություններում ի հայտ է բերվել, որ հուզական նման ֆոնը անմիջական ազդեցություն է ունենում կոգնիտիվ (ճանաչողական) պրոցեսների վրա՝ առաջացնելով սխալ որոշումների կանխակալություն:

Ֆիզիկական և հոգեբանական ծանրաբեռնվածության պայմաններում որոշումների կայացման վերաբերյալ հետազոտություններ են արվել կառավարման և ինժեներական հոգեբանությունում, արտակարգ իրավիճակների համակարգում (Դ. Ռ. Հայրապետյան), ինչպես նաև սպորտում (վոլեյբոլում՝ Վոլկով Ա. Վ): Բարդ իրավիճակներում որոշումների կայացման առումով մեծ աշխատանք են կատարել Տ. Վ. Կորնիլովան, Օ. Կ. Տիխոմիրովը, Վ. Ա. Պլախտիենկոն, Բ. Վ. Լոմովը, Ա. Վ. Կարպովը, Դ. Կանեմանը, Գ. Սահմոնը):

Հետազոտության այս փուլում առաջադրված **նպատակն** էր՝ տարբեր խաղային պայմաններում և տարբեր որակավորում ունեցող ֆուտբոլի մրցավարների որոշումների արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական գործոնների վերլուծությունը:

Ինչպես նշել է Բ. Գ. Անանևը, չափազանց կարևոր է, որ մարդու աշխատանքի հիմնախնդիրն ընդգրկի ոչ միայն աշխատանքային դրդապատճառներ և հարաբերություններ, այլև հոգեֆիզիոլոգիական կազմակերպում, որի հատկություններն են աշխատունակությունը, ընդհանուր օժտվածությունը և հատուկ ընդունակությունը [Ананьев Б. Г 1968, էջ 318–326]:

Մրցավարի աշխատանքը նրա հոգեկան արտացոլման և գործունեության կարգավորման բոլոր մակարդակներում բնութագրվում է հույժ կարևոր խնդրահարույց իրադրությունների զգալի տեսակարար կշռով և դրանց հետ կապված որոշման ընդունման գործընթացների էական դերակատարությամբ: Որոշման ընդունման հոգեբանական ուսումնասիրման տարբեր մոտեցումները միավորող միակ հիմքը «բոլոր հնարավոր այլընտրանքներից կատարվող ընտրությունն է», որի միջոցով սուբյեկտը կարողանում է հաղթահարել իրավիճակի անորոշությունը: Ըստ Տ. Կորնիլովայի՝ անորոշությունն իր էությամբ հոգեբանական եզրույթ չէ [***Корнилова Т. В.***, 2005, ***Корнилова Т. В.*** 2003]: Հեղինակը մատնանշում է ժամանակակից հոգեբանությանը բնորոշ գործունեության ու ակտիվության վրա հենված մոտեցման, համակարգայնության և զարգացման սկզբունքները, որոնց հետ էլ նրա կարծիքով պետք է համադրել որոշման ընդունման հասկացությունների ամբողջական համակարգը:

Որպես յուրօրինակ նորագոյացություն՝ Տ. Կորնիլովան առաջարկում է «դինամիկ կարգավորող համակարգ» հասկացությունը, որը մասնակիորեն ազդում է որոշման ընդունման տարբեր փուլերի և սուբյեկտի վերջնական ընտրության վրա [***Корнилова Т. В.***, 2002]:

Որոշման ընդունման գործընթացը ներառում է մի քանի փուլ. ա) խնդրահարույց իրադրության առանձնացումը կամ խնդրի գիտակցումը, այսինքն՝ պայմանավորող գործոնների և դրանց բովանդակությունն արտացոլող հարցերի որոշումը, բ) խնդրի լուծումը, վարկածների կամ լուծման հնարավոր տարբերակների առաջադրումը, այսինքն՝ լուծման սկզբունքի որոշումը, գ) լուծման ստուգումը՝ պահանջվող արդյունքի նվաճումն ապահովող տարբերակի ընտրությունը, առաջադրված տարբերակների գնահատումը:

Ակնհայտ է նաև, որ նշված փուլերից ցանկացածում տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մրցավարը կարող է թույլ տալ որոշման ընդունման գործընթացի սխալներ:

Որոշ մասնագետների պնդմամբ [**Береговой Г. Т., Завалова Н. Д., Ломов Б. Ф., Пономаренко В. А.** 1978]՝ կախված վարկածներ առաջադրելու և դրանք վերահսկելու գործընթացների հարաբերակցությունից որոշման ընդունումը կարող է լինել իմպուլսիվ (վարկածի առաջադրում առանց վերահսկողության), ռիսկային (մասնակի հսկողությամբ), զգուշավոր (չափից ավելի հսկողությամբ), հավասարակշռված (հավասարեցված) և իներտ (երբ վերահսկումը ճնշում է վարկածների առաջադրումը): Այստեղից պարզորոշ է դառնում, որ որոշման ընդունման գործընթացը բավականին բարդ հոգեբանական ընթացակարգ է, որը որոշում է մարդու գործունեության գործառական հուսալիության մակարդակը: Այս դրույթը բավականին ամբողջական ուսումնասիրվել է Գ. Մ. Զարակովսկու և Վ. Դ. Մագազինիկի աշխատանքում [***Зараковский Г. М., Магазанник В. Д.*** 1981], ովքեր որոշման ընդունման գործընթացում առանձնացրել են երեք փուլեր.

- ինտենցիոնալ (կանխամտածված, նպատակաուղղված, գիտակցված), որը կապված է անորոշության իրադրության ապրման և գիտակցման հետ,
- օպերացիոնալ (կամ «որոշման տեղեկատվական նախապատրաստում»), որն ուղղված է ընտրության անորոշությունը նվազեցնելուն,
- հաստատող (վավերացնող)

Ըստ Տ. Կորնիլովայի, ելնելով գործունեության տեսության դրույթներից՝ որոշման ընդունման անձնային-դրդապատճառային կարգավորման գաղափարների զարգացումը անհրաժեշտ է դարձնում անձի ներքին փոփոխականների՝ ճանաչողական ոճերի (իմպուլսիվության և ռեֆլեքսիվության ցուցանիշների) ուսումնասիրումը [***КорниловаТ. В.***, 1997, էջ 127–151, ***КорниловаТ. В.***, 2002, էջ 202]: Սույն պնդման հետ համակարծիք է նաև Հ. Մ. Ավանեսյանը (2010), ով ևս փաստում է, որ ժամանակակից գիտական գրականությունում հիմնականում քննարկվում են որոշման ընդունման հիմնախնդրի առանձին կողմերը, այդ թվում՝ ներընդունողական կանխատեսումների առանձնահատկությունները, հոգեբանական մոդելները, կանխատեսման գործընթացային և անձնային-դրդապատճառային կողմերի փոխհարաբերությունները և այլն [Որոշման ընդունման հոգեբանություն 2010, էջ 5]:

Այսպիսով՝որոշման ընդունման գործընթացում սխալ գործողությունների հանգեցնող նշված հոգեբանական երևույթների վերլուծությունը մեծ նշանակություն ունի գործունեության հոգեբանական համակարգի իրականացման հուսալիության տեսակետից:

Նույնիսկ համառոտ վերլուծությունը վկայում է այն մասին, որ որոշման ընդունման գործընթացի սխալները պայմանավորվում են գործունեության ծրագրերի, դիրքորոշումների, նպատակների և շարժառիթների, ինչպես նաև մրցավարների անհատական ճանաչողական և անձնային առանձնահատկություններով:

Հետազոտությունից ստացված տվյալներ: Հայ 40 մրցավարների և Բրազիլիայում կայացած 2014 թվականի 64 հանդիպումները սպասարկած 120 մրցավարների հետ գրեթե նույն ժամկետներում զուգահեռաբար անցկացրած մեր հետազոտությունները համեմատելու համար կիրառել ենք փակ բնական դիտման (հայ մրցավարներ) և տեսադիտման (ԱԱ մրցավարներ) մեթոդները: Համապատասխան գրանցումներ են իրականացվել 2014 թվականի ԱԱ 64 հանդիպումների և Հայաստանի տարբեր առաջնությունների 100 հանդիպումների վերաբերյալ: Արդյունքների ամփոփումը արձանագրեց, որ ԱԱ խաղերի ընթացքում մրցավարները կայացրել են 1898 որոշում, որոնցից 200-ը սխալ կամ անհամապատասխան (ըստ մրցավարական միջազգային կանոնակարգի): Փաստորեն որոշումների 9,5 տոկոսը սխալ է:

Հայաստանի մրցավարները 100 հանդիպումներում կայացրել են 3100 որոշում, որոնցից 308-ը սխալ, այսինքն 9,9%. Սակայն պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ, Հայաստանի հետազոտված մրցավարները ունեցել են տարբեր որակավորում և բաժանված են եղել երկու խմբի: Առաջին խումբը կազմել են 5 տարուց ավելի ստաժ և բարձր որակավորում ունեցող մրցավարները, և նրանց կողմից 50 հանդիպումներում կայացվել է 1510 որոշում, որից 140-ը սխալ: Մինչև 5 տարի ստաժ և համեմատաբար ցածր որակավորում ունեցող մրցավարները վարած 50 խաղերում կայացրել են 1590 որոշում, որից 170-ը սխալ: Այսինքն առաջին խմբի սխալները կազմել են 9,2%, իսկ երկրորդ խմբինը՝10,8%:

Վերլուծությունների ամփոփումը ցույց տվեց, որ որոշ փորձագետներ նման քանակը համարում են օրինաչափ, իսկ ոմանք էլ բացասական: Սակայն ամենաէականն այն է, որ մրցավարական սխալները ոչ միայն քանակական բնույթ են կրում, այլև՝ որակական: Հնարավոր է մրցավարը հանդիպման ընթացքում մի քանի սխալ որոշում կայացնի, որոնք չազդեն խաղի արդյունքի կամ հաշվի վրա, իսկ մեկ այլ դեպքում՝ անթերի անցկացնի ամբողջ հանդիպումը, սակայն խաղի վերջին րոպեին այնպիսի սխալ թույլ տա, որը ճակատագրական դառնա և՛ թիմերից մեկի, և՛ իր համար:

Բրազիլիայում կայացած 2014 թվականի աշխարհի առաջնությունից առանձնացվել են առավել կարևոր 9 հանդիպումները, որոնցում արված 18 սխալները ազդել են խաղի վերջնարդյունքի կամ հաշվի վրա: Սխալների մեծ մասը կատարվել են տուգանային հրապարակում (10) և դրանց 40 % (4) կապված է եղել 11 մետրանոցների նշանակման հետ: Տուգանային հրապարակում կատարված մրցավարական սխալների քանակով երկրորդ տեղում դարպասի գրավման հետ կապված անարդարացի որոշումներն են (3): Երրորդը՝ կարմիր և դեղին քարտերն են, չորրորդ տեղում խաղից դուրս իրավիճակն է: Իսկ խաղադաշտի տարբեր հատվածներում կատարված մրցավարական սխալների քանակով առաջին տեղում խաղից դուրս վիճակն է (6):

Բերված օրինակներն ու տեսադիտման մեթոդով ԱԱ 64 հանդիպումների մեր ուսումնասիրությունները փաստում են, որ աշխարհի առաջնությունում մրցավարներն առավել շատ սխալներ են թույլ տվել տուգանային հրապարակում (Տես նկ. 1-ում):



Նկար 1. Մրցավարների սխալներն ըստ խաղադաշտի հատվածի

Դրանք հիմնականում կապված են եղել 11 մետրանոցների հետ: Այս խնդրում ոչ միայն մեծ դեր է խաղում մրցավարի ընտրած դիրքը, տեսողական ընկալիչների աշխատանքը, ուշադրության ծավալն ու դինամիկ ուշադրության ծավալը, ամբողջական պատկերի ըմբռնումն ու մտածողության արագությունը, այլև բարդ իրավիճակներում որոշման կայացման պատասխանատվությունը:

Ֆուտբոլի մրցավարների մեթոդիկան թույլատրում է որոշում կայացնելու համար մինչև երկու հաշիվը մտածել, նոր արձանագրել փաստը, սակայն որքան հանդիպումը ծանր է լինում, այնքան դժվար է դառնում որոշում կայացնելը:

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ մրցավարական սխալները տուգանային հրապարակներում (և ոչ միայն) ավելի շատ են ստացվում երկրորդ խաղակեսում, հատկապես հանդիպման վերջնամասում: Դա արտահայտվում է մրցավարի ծանրաբեռնված աշխատանքի հետևանքով առաջացած հոգնացությամբ, նաև մրցող թիմերի խաղացողների հոգնածության ֆոնի նյարդային լարվածությամբ, դաշտի տեր թիմի պարտության կամ ոչ ցանկալի արդյունքի պարագայում տրիբունաներում գտնվող երկրպագունների սանձարձակությամբ: Այդ գործոնները կամա, թե ակամա անդրադառնում են մրցավարի վրա. նա որոշում կայացնելիս շատ կարճ ժամանակահատվածում հաշվի է առնում բոլոր հանգամանքները: Մեկ անհաջող խաղի պատճառով բարձրակարգ մրցավարները կարող են կորցնել ձեռք բերված հեղինակությունը, ինչպես նաև կրեն նյութական կորուստներ:

Աշխարհի առաջնության սխալների վերաբերյալ կատարված կոնտենտ անալիզի արդյունքներից պարզվեց, որ սխալների 60 տոկոսը լինում են երկրորդ խաղակեսում, առավելապես խաղավերջում: Իսկ ըստ ժամանակահատվածի՝ 1-30-րդ րոպեի ընթացքում սխալները կազմում են 27-28 %, 31-60 րոպե՝ 32-33 %, իսկ վերջին 30 րոպեների ընթացքում՝ մինչև 40 %: (Տես՝ նկ. 2)



Նկար 2. Մրցավարների սխալներն ըստ խաղի ժամանակահատվածի

Մեր կողմից բնական դիտման մեթոդով հետազոտված 100 հանդիպումների արդյունքներից պարզվեց, որ հայ մրցավարների մոտ խաղավերջում սխալների քանակն ավելանում է: Այս հանգամանքը բացատրվում է այն բանով, որ հայ մրցավարները ունեն բարձրակարգ հանդիպումներ վարելու փորձի պակաս, ինչը բացասական ազդեցություն է թողնում նրանց ընդհանուր մասնագիտական գիտելիքների ու հոգեբանական պատրաստության վրա:



Նկար 3 Աշխարհի առաջնության և հայ մրցավարների կատարած սխալներն ըստ ժամանակահատվածի:

Եզրակացություններ

1.Մրցավարական սխալները լինում են երեք բնույթի՝ մասնագիտական, ֆիզիկական ծանրաբեռնվածության և հոգեբանական լարվածության հետևանքով:

2. Մասնագիտական բնույթի սխալները հիմնականում պայմանավորված են փորձով և այդ պատճառով սկսնակների մոտ նկատվում է ավելի մեծ տոկոս:

3.Ֆիզիկական հոգնածության ֆոնի սխալներ կարող են լինել բոլոր մրցավարների մոտ, հատկապես նրանց, որոնց ֆիզիկական հնարավորությունները թույլ չեն տալիս ամբողջ խաղի ընթացքում լինել խաղի գլխավոր իրադարձության կողքին:

4.Հոգեբանական բնույթի սխալները նույնպես լինում են բոլորի մոտ՝ կախված ծանր և էքստրեմալ պայմաններում նոր իրավիճակների ճիշտ գնահատման հետ:

5. Ֆուտբոլի մրցավարությունում հոգեֆիզիոլոգիական բնույթի սխալներից են մի կողմից բարդ ընթացքով հանդիպումների ժամանակ հոգնածության պատճառով առաջացած պերցեպտիվ և կոգնիտիվ սխալները, մյուս կողմից՝ ներքին և արտաքին սթրես գործոնների ֆոնի վրա առաջացած սխալները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայրապետսյան Դ.Ռ. Որոշման ընդունման հոգեբանություն, Եր. ԵՊՀ, 2010, էջ 5:
2. Ղազարյան Ֆ. Գ. Սպորտային պատրաստության հիմունքները (դասագիրք). – Եր.: «Զորեր» հրատ., 1993. – էջ 56-67:
3. Ананьев Б. Г. Человек как предмет познания. - Издательство Ленинградского Университета, 1968, с. 318-326.
4. Береговой Г. Т., Завалова Н. Д., Ломов Б. Ф., Пономаренко В. А. Экспериментально-психологические исследования в авиации и космонавтике. – М.: Наука, 1978. – 303с.
5. Зараковский Г. М., Магазанник В. Д. Психологические критерии сложности процесса принятия решения человеком-оператором / Методология инженерной психологии, психология труда и управления. Отв. ред. Б. Ф. Ломов и В. Ф. Венда. – М.: Наука, 1981. – С. 63-78.
6. Корнилова Т. В. Диагностика мотивации и готовности к риску (монография). – М.: Изд-во «Институт психологии РАН», 1997. – 232 с.
7. Корнилова Т. В. Методологические проблемы психологии принятия решений // Психологический журнал, том 26, № 1, 2005. – С. 7-17.
8. Корнилова Т. В. Мотивационная регуляция принятия решений: современные представления. // Современная психология мотивации / Под ред. Д. А. Леонтьева. – М.: Смысл, 2002. – С. 172-213.
9. Корнилова Т. В. Психология риска и принятия решений.–М.: «Аспект Пресс», 2003.– 286 с.

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА РЕШЕНИЯ ФУТБОЛЬНЫХ СУДЕЙ

АРУТЮН БАБАЯН

Заведующий кафедрой психологии Армянского государственного института физической культуры, профессор

АРМАН ГЕВОРГЯН

Аспирант кафедры Армянский государственный институт физической культуры

Статья состоит из двух частей. В первой части представлены теоретические и аналитические данные армянских и зарубежных специалистов, изучающих факторы воздействия на судей при принятии решения. Приведены примеры из теоретических тезисов передовых

психологов, изучавших область принятия решения в экстремальных ситуациях. В экспериментальной части с помощью контент-анализа представлены результаты ошибок с точки зрения психологической и психофизиологической подготовленности арбитров, судивших матчи чемпионата мира по футболу в 2014 году и арбитров, судивших матчи чемпионатов Армении разного уровня.

PSYCHOLOGICAL FACTORS INFLUENCING FOOTBALL REFEREES' DECISION MAKING

HARUTYUN BABAYAN

Head of the Chair of Psychology Armenian State Institute of Physical Culture, Professor

ARMAN GEVORGYAN

Postgraduate Student of Armenian State Institute of Physical Culture

The article consists of two parts. The first part reveals the theoretical and analytical data of Armenian and foreign leading experts who studied the impact of psychological factors of decision making. The second part of the article is devoted to the experimental part with content analysis of the results of referee mistakes and the psychological factor influencing their decision. The author investigates the level of the soccer referees' psychological and psychophysiological readiness, who judged FIFA World Cup 2014 and referees who judged the match of the championship Armenia at various levels.